ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/88/2023-2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 30 հունվարի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի հունվարի 30-ին, քննելով «Արժանապատիվ ապագա» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) գործադիր մարմնի ղեկավար Արմեն Դարբինյանի կողմից 2021 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/88/2023 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-

ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ 2021 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ նաև Տարեկան հաշվետվություն) օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել և օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակվել:

1.2 Վերոնշյալ խախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 01/2604/12-2023 գրությամբ «Արժանապատիվ ապագա» կուսակցության գործադիր մարմնի ղեկավար Արմեն Դարբինյանին է ներկայացվել ծանուցում Կուսակցության Տարեկան հաշվետվությունը սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու առերևույթ խախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով մասնակցելու Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.3 29.11.2023 թվականին պատվիրված նամակով (հետադարձ ծանուցմամբ) Արմեն Դարբինյանին ուղղված գրավոր ծանուցման փոստային առաքանու ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողովում չի ստացվել հետադարձ ծանուցում (ծանուցման մասին անդորրագիրը), ուստի հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի դրույթները՝ այն տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների կայքում և ուղարկվել է անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի ղեկավարին:

1.4 2023 թվականի դեկտեմբերի 8-ին պատշաճ ծանուցված «Արժանապատիվ ապագա» կուսակցության նախագահ Արմեն Դարբինյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ91/2023 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 01/2960-2023 գրությամբ «Արժանապատիվ ապագա» կուսակցության նախագահ Արմեն Դարբինյանին է

հասցեագրվել ծանուցում վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին, որը նշանակվել է 2024 թվականի հունվարի 9-ին, ժամը 10:00-ին: Նշված ծանուցումը Արմեն Դարբինյանի կողմից ստացվել է:

1.6 2024 թվականի հունվարի 8-ին Մ-89-2024 մտից գրությամբ Արմեն Դարբինյանի՝ adarbinian@hotmail.com էլեկտրոնային հասցեից Հանձնաժողովին է հասցեագրվել գրություն այն մասին, որ 2024 թվականի հունվարի 9-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը ներկա կգտնվի Կուսակցության միացյալ խորհրդի անդամ Ստեփան Ծաղիկյանը:

1.7 2024 թվականի հունվարի 9-ին կայացած վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը ներկայացել էր Կուսակցության միացյալ խորհրդի անդամ Ստեփան Ծաղիկյանը, ինչպես նաև Անատոլի Եղիազարյանը: Ստեփան Ծաղիկյանը գործի քննության ընթացքում հայտարարեց, որ Անատոլի Եղիազարյանը հանդիսանում է «Արժանապատիվ ապագա» կուսակցության անդամ, ինչպես նաև կուսակցության հաշվետվությունների ներկայացման համար պատասխանատու անձ:

Գործի քննության ընթացքում վերջիններս հայտարարեցին, որ միջոցներ կձեռնարկեն «Արժանապատիվ ապագա» կուսակցության 2021 և 2022 թվականների տարեկան հաշվետվությունները սահմանված ձևաչափով և կարգով ներկայացնելու համար, որի համար անհրաժեշտ կլինի որոշ ժամանակ: Հիմք ընդունելով նշված հայտարարությունը, Հանձնաժողովը որոշեց գործի քննությունը հետաձգել և նշանակել 2024 թվականի հունվարի 16-ին, ժամը՝ 10:00-ին:

1.8 Հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 11-ի N 01/62-2024 գրությամբ «Արժանապատիվ ապագա» կուսակցության գործադիր մարմնի ղեկավար Արմեն Դարբինյանի՝ adarbinian@hotmail.com էլեկտրոնային հասցեին է ներկայացվել Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունվարի 16-ին նշանակված նոր գործի քննության օրվա տեղի և ժամանակի մասին ծանուցումը, որին, սակայն, Արմեն Դարբինյանի կողմից հավաստում չի ներկայացվել Հանձնաժողով, այսինքն «Արժանապատիվ ապագա» կուսակցության գործադիր մարմնի ղեկավար Արմեն Դարբինյանը պատշաճ կարգով չի ծանուցվել գործի քննության տեղի և ժամանակի մասին:

1.9 2024 թվականի հունվարի 16-ին Արմեն Դարբինյանի բացակայությամբ Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չիրապարակելու իրավախախտման կապակցությամբ անցկացվել է Հանձնաժողովի նիստ: Նիստի ընթացքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Արժանապատիվ ապագա» կուսակցության գործադիր մարմնի ղեկավար Արմեն Դարբինյանը, որպես վարույթի մասնակից չի ծանուցվել գործի քննության տեղի և ժամանակի մասին, ուստիև արձանագրեց,որ նման պայմաններում չի կարող իրականացվել և եզրափակվել թիվ ՎԻՎ/88/2023 գործի քննությունը:

1.10 2024 թվականի հունվարի 25-ին Հանձնաժողովի N 01/286-2024 գրությամբ «Արժանապատիվ ապագա» կուսակցության գործադիր մարմնի ղեկավար Արմեն Դարբինյանի՝ adarbinian@hotmail.com էլեկտրոնային հասցեին է ներկայացվել Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունվարի 29-ին, ժամը՝ 11:00-ին նշանակված նոր գործի քննության օրվա տեղի և ժամանակի մասին ծանուցում: Արմեն Դարբինյանի կողմից 2024 թվականի հունվարի 29-ին հաղորդագրությամբ հավաստում է ներկայացվել 2024 թվականի հունվարի 25-ին Հանձնաժողովի N 01/286-2024 գրության ստացման մասին:

1.11 2024 թվականի հունվարի 18-ին Արմեն Դարբինյանի լիազորված ներկայացուցիչ Անատոլի Եղիազարյանի կողմից Հանձնաժողով է մուտքագրվել Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը:

2. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/88/2023 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

2.1 «Արժանապատիվ ապագա» կուսակցության նախագահ Արմեն Դարբինյանը 2021 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակել:

2.2 Մինչև նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը ներկայացվել է Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը:

3. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

3.1 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը:

3.2 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

3.3 20.01.2021 թվականին ուժի մեջ մտած «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-1-Ն օրենքի անցումային դրույթ հանդիսացող 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունները սույն օրենքի 20-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ 2021 թվականի հաշվետու տարվա վերաբերյալ իրենց տարեկան հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները հրապարակում են մինչև 2022 թվականի սեպտեմբերի 15-ը:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

3.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.6 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

3.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.8 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

3.11 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանքները, որի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված կարգավորման համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին նույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելու դեպքում:

3.12 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված են վարչական տույժ նշանակելու ժամկետները, որի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 40.3-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորումից հետևում է, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժի կիրառումը հնարավոր է դառնում իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ **երկու ամսվա ընթացքում**, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով քննարկվող խախտումները Հանձնաժողովի կողմից հայտնաբերվել են 2023 թվականի նոյեմբերի 29-ին, Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու կամ Կուսակցության Տարեկան հաշվետվությունը սահմանված կարգով մինչև գործի քննության ավարտը ներկայացնելու փաստի ուժով վարչական պատասխանատվությունից ազատելու հարցի քննարկումը հնարավոր կլիներ վարույթի եզրափակմամբ քննարկել 2023 թվականի նոյեմբերի 29-ից հետո՝ երկու ամսվա ժամկետում, այսինքն՝ մինչև 2024 թվականի հունվարի 29-ը:

Տվյալ պարագայում Արմեն Դարբինյանի կողմից 2024 թվականի հունվարի 25-ին Հանձնաժողովի N 01/286-2024 գրության ստացման մասին հավաստումը ստացվել էր գործի քննության օրվա դրությամբ, որպիսի պարագայում 2024 թվականի հունվարի 29-ին նշանակված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության օրվա դրությամբ հնարավոր չի եղել վերջինիս բացակայությամբ նույն օրը քննարկել և եզրափակել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթը: Նշվածով պայմանավորված՝ գործի քննությունը հետաձգվել է հաջորդող աշխատանքային օրը՝ հունվարի 30-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը գտնում է, որ սույն դեպքում կիրառելի են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթները, և սույն գործի վարույթը ենթակա է կարճման՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին նույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված երկամսյա ժամկետն անցնելու հիմքով:

Միաժամանակ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում սույն գործով արձանագրել նաև, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը, որի համատեքստում Հանձնաժողովը էական է համարում սույն դեպքում Արմեն Դարբինյանի լիազորված ներկայացուցչի կողմից Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը Հանձնաժողով ներկայացնելու հանգամանքը, որի արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«Արժանապատիվ ապագա» կուսակցության գործադիր մարմնի ղեկավար Արմեն Դարբինյանի նկատմամբ հարուցված թիվ **ՎԻՎ/88/2023** վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:

1.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն սահմանված կարգով Արմեն Դարբինյանին հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**